

Թէ «այս եկեղեցիին մօտ էր Յովակիմի տունը, որ է վանքը: Վանքին արևելեան կողմը չորս մղոն հեռաւորութեամբ՝ կը գտնուէր Երիքովը: Այս նկարագրութեան ճիշդ տեղը կը գտնուէր Քողիբան, եւ այս աւանգուծիւնն ալ շատ հին է:

Քողիբան թէև անապատականներու իբր ճգնարան՝ հնագոյն ժամանակաց մթութեան մէջ մնացած է, բայց իբր մենաստան սկզբնաւորուած է է. դարուն և հոն կը ծաղկին նշանաւոր վանականներ՝ Քողիբացիին Գէորգ (+ 625) և Անտոն որ դրած է առաջնոյն վարքը: Քողիբան՝ է. դարուն իր պայծառութեան զէնիթին վրայ կը գտնուէր. յետոյ տակաւ առ տակաւ անշքացաւ եւ մինչև ժի. դար թէև գոյութիւն ունէր, սակայն նոյն ժամանակէն սկսեալ քայքայուեցաւ եւ վերջին տարիներուն միայն նորոգուեցաւ:

Քողիբայի գերեզմանատունը գտնուած է վերջին դարուն: Այս գերեզմանատունը ստորերկրեայ բնակարան եւ ընդարձակ քարայր մըն է, ուր փորուած են գերեզմաններ: Գրեթէ 150 մեռելներու անուններ գրողմուած են նոյն գերեզմաններու առաստաղին ու պատերուն վրայ, հոյակապ մեռելամատեան մը՝ որուն մէջ գրեթէ իւրաքանչիւր անունի քով նշանակուած է մեռեալին տիտղոսը, ազգատոհմը եւ ընդհանրապէս (indicton), բայց ոչ երբեք տարին: Այդ անուններուն մէջ կը գտնուին եպիսկոպոսներ, պարզ վանականներ, նոյն իսկ երեք սարկաւազուհիներ: Այս գերեզմաններուն մէջ թաղուած են զանազան ազգութիւննրէ այլ և այլ ննջեցեալներ, այսպէս Հայեր, Իսաւրացիներ, Կիլիկեցիներ, Միջագիսացիներ, Արաբներ, Հոռինայեցիներ, Գաղացիներ, Ասկաղունացիներ, Մայուցիներ, Տուրացիներ, Անիոնացիներ, Դամասկացիներ, Եգիպտացիներ,